

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIÉ (مجموعة علوم)

ԽՐԱԳՐԱԴՆՏ
Ղ. ԲՈԼԱՏ

ՏԵՕՐԷՆ
Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 8

1898 ԱՊՐԻԼ 25

Ամեն ճեղի համար Ցարեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ
հռամսեայ 13 դահ: Օտար երկրաց համար Ցարեկան կանխիկ 15 շրմեմ:
Թղթասարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասք 40 փարայ: Դա-
ւառնեի բոսքի բոլ ու կ'ընդունուի 100 դրուի ճեղ 105 դրու:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻԻՆ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ — Մեր բնակարանները:
Ղ. ԲՈԼԱՏ — Ժողովրդական ճարտարարուեստներ Ա.
ԳԱՌՆԻԿ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ — Հայերէն ուղղագրութիւն — Մասամբ
գիւրացած Ա.
Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ — Գրչի գրասանքներ — Կեղծ բարեպաշտները:
ՔԱՐՈՂ — Թոռնորդին [Վէպիկ]:
Ղ. ԲՈԼԱՏ — Շերամաբուծութիւնը — Բասթէօնեան դրութիւնով:
ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԸ — Արհեստական գիտելիքներ — Արուեստական գրա-
տախտակ:
ԱՐԱՔՍ — Առտնին առողջապահականը — Գլխու ցաւի պարզ դեղ մը:
— Սենեակի օդը մաքրել:
ԱՐԱՔՍ — Առտնին տնտեսականը — Կաթով սուրճ:
ՏԱՆՏԻԿԻՆԸ — Խոհանոցի բաժինը — Նարնջահամ համեմէաց: — Ֆը-
լանտուական (ֆիլեմէնկ) համեմէաց:
Ասկէ-անկէ — Գիշերները բացւող ծաղիկներ: — Կանթեղներու ա-
պակիին գիւտը:
Թղթակցութիւնը Հանրագիտակի:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻԿՈԼԱՍԵԱՆ

Կ. Պոլիս Զաւմանիլար եօգուտու Զիւմպիլի Խան Թիւ 28

Թղթատարութեան գործերու մէջ լաւ
Հմտութիւն ունեցող, և իւր գործերուն մէջ
խիստ ճարտար երիտասարդ մը պատրաստ
է գահացուցիչ ամսականաւ ծառայել թէ
պստ և թէ գաւառի վաճառատան մը մէջ,
հարկ եղած երաշխաւորութիւնը տալով:
Իմեջ Հանրագիրտակի խմբագրութեան:

ՏԱՆԿ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆՑ

	Ղրու
Տիկին Մօնօրօ, Ա. Տիւմա.	7
Հաւատք, Յոյս, Սէր, Ա. Պուրծուա	2 1/2
Տարաբաղձ Վարդուհին, Թրգմ. Մա-	6
մուրեան	2 1/2
Այտա	3
Ագահն, Մոլիէն	3
Երեւակայական հիւանդ, Մոլիէն	3
Սէրը բծիչ է	3
Ակամայ բծիչ է	3
Թարթիւք	2 1/2
Փութոնեաք	5
Ազատանարան սիրոյ	2
Փռլէանի կոյսը, Շիւլէրի	30
Թրովաթօրէ, ճայնագրեալ նօթայով	60
մէկտեղ	50
Աշափրանկա կատակերգութիւն Խ. Վ.	6 1/2
Գալֆայեանի	6
Սեւ գղեակի աւերակները	5
Հոռմէոս ճիւղիէդա, Շէքսպիր	15
Լիօնի սուրհանդակը	5
Գաղտնիք Հնդկաստանի	4
Յուլիանէ Գոմալա	2
Յովսէփ գեղեցիկ, Թէրզեան	5
Թրովաթօրէ, Վերտի	12
Բամելայ բարեկենդանի գիշերները	20
Պետրոս մեթաստասիօզ	15
Ճաշակ հին եւ նոր, ողբերգ. Վենետիկ	4
Ռիւլ Պլաս, Վ. Հիւլիօ, Թրգ. Ռուսինեան	2 1/2
Մէրոպէ Ալփիէր	6
Հասկաքաղ աղջիկը	6
Ռասինի Իփիգէնի	7
Արիստոտէմ և Միրոպէ, ողբ. Մոնդրոյ	10
Արիստոտէմ, Պօլիս	7
Գոթոգլա, Ռասին	6
Ալզիր կամ Ամերիկացիք, Վօլթէր	6
Կենաց բաժակը	6
Բարի իրիկուն Գ. Բանթալօն	10
Յովհաննէս Տ'Արք, Շիւլէրի, Պօլիս տպ.	3
Թէոգորոս Սալէուհի	2 1/2
Վեց ու կէս պորտէ ժառանգ սնտուկը	3
Հայր Զօհրապ Կարկատնեցի	3
Ներկարարը	3
Կը վաճառուի Զարդարեան Գրատուն.	
Զագմագէրլար, Թիւ	50

ՏՕԲ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԸ

Որ 25 տարիներէ ի վեր զինուորական
և քաղաքային հիւանդանոցներու մէջ
պաշտօն վարած է, պատիւ ունի ծա-
նուցանել թէ՛ այս անգամ իւր բնա-
կութիւնը հաստատած է Գատը-Գիւղ
Պատէմ վոդոց թիւ 12. ուր հիւանդ
կ'ընդունի ամեն օր, ի մասնաւորի աչքի
հիւանդութեանց: Իսկ Զարեքարթի և
Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկե-
ղեցւոյ դիմաց Զպուքեան Լեւոն է-
ֆէնտիի Հանրածանօթ Դեղաբանը, և
հոն իրեն գիմնդ աղքատ հիւանդները
ձրի կը դարմանէ:

2-10



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵՄ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ

ձեռք ալի խանի դրան կից, քիւ ԽՕ

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդար-
ձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ
ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն
կողմերը: Գաւառներու յանձնարարու-
թիւնները փութով և խնամով կը կա-
տարուին:

Զինական, Հնդկական, Ճաւայի և Սէյ-
լանի էն աղնիւ թէյերէն ուղղակի քեր-
ուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղ-
ծերէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ
Ստորագրութիւնը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական և Գրական



Encyclopedie

{مجموعه علوم}

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 8

1898 ԱՊՐԻԼ 25

ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ



«Պանիր հացիկ պարզ երեսիկ,
«Պզտիկ տունիկ մը ունիմ,
«Ես կը բանամ ես կը կոցեմ,
«Տափուկ բունիկ մը ունիմ:»

Ո՛վ չը յիշեր այն երանաւէտ յարկը
որ իր մանկութեան օրօրանն եղած է,
ո՛ւր իրեններուն հետ անցուցած է ու-
րախութեան անվրդով օրեր:

Հոն է որ մօր մը ժպտուն դէմքին
քաղցր յիշատակը մեր աչքին առջեւ կը
պատկերանայ, հոն է որ անոյշ քոյրեր
և քրեւի եղբայրներդիրար կը գգուէին,
հոն իրենց համար երջանկութեան բոյն
մը յօրինուած էր:

Եւ երբ տարիներու ծանր բեռը մար-
դուն թիկունքը կորացնէ, երբ աւե-
խառն մաղեր ճակատը չըջացատեն, կը
դառնայ անգամ մը եւս անցեալ օրե-
րուն վրայ նայելու, կը փնտռէ իր բու-
նիկը և հոն կ'երազէ հանգիստ տալ իր
յողնած մարմնոյն:

Այո, չի կայ մարդ որ տան վրայ գա-
ղափար չ'ունենայ, և սակայն դրական
կեանքի պահանջը այլապէս խորհել կու-
տայ էրիկ մարդուն և կնիկ մարդուն,
էրիկ մարդիկ առհասարակ իրենց մի-

ջոցները կը գործածեն խանութ մը ստա-
նալու. զիրենք ապրեցնողը գործն է, և
հասարակաց առածն ալ իրաւունք տալ
կը թուի իրենց երբ կը հռչակէ թէ՛ խ-
նութը որոն չը բերէ, բայց որոն խանութ չը
բերէ:

Այսպէս չեն կինները, իրենց սրտին
հոգն է տունիկ մը ունենալ և գլուխ-
նին մէջը խօթել. հոն է իրենց ապահո-
վութիւնը. և գիտեն որ երբ բախտը ի-
րենց ժպտելէ դադրի, երբ ճախողուած-
քի մը հանդիպին՝ հոն կրնան իրենց խո-
նարհ վիճակը պարտկել և «Եւ չէր» ճե-
ճալը որոն անբիծ կեանք մը անցունել:

Ինծի որ մնայ կինը իրաւունք ունի.
վերջապէս, քանի որ մարդ վաչկատուն
չէ, քանի որ վրանի տակ չը բնակիր հա-
րուստ, աղքատ, գիւղացի, քաղաքացի,
ինչ որ ալ ըլլայ, գէշ ազէկ բնակու-
թեան տունի մը պէտք ունի:

«Պանիր հացիկ պարզ երեսիկ,
«Պզտիկ տունիկ մը ունիմ.
«Ես կը բանամ ես կը գոցեմ,
«Տափուկ բունիկ մը ունիմ:»

Ահա կը տեսնէք, իր դուռը ինք բա-
նալ գոցել, վրան խառնուող չ'ունենալ
իր պատիւովը ապրիլ, այս զգացումն է
որ կը տիրէ մեր առաքինի ժողովրդեան

Սակայն մեծագոյն չարիքը այն չէ, որ
Խալէֆան մեղ կը հասցնէ, հապա այն է որ
մենք մեզի կ'ընենք: Իր տան հոգ տա-
նիլ գեացողներ քիչ են, թէ՛ քաղաքը
թէ՛ գիւղը: Մութ ու կուրթ, ձեղձներ
ցածկուկ սենեակներ, չորս պատի մէջ,
փորը կռնակին փակած, խոնաւ տու-
ներ, այսպէս չէ՞ քաղաքի բնակարաննե-
րէն շատին նկարագրեր:

Իսկ գալով գեղիններուն, կը յիշեմ որ պատահաբար Օվաճրդ գացի։ Ան ի՛նչ հովասուն, ի՛նչ բնական գեղեցկու թիւններով օժտուած գեղ մըն է․ բլուրի մը գագաթին վրայ թառած, որուն ստորոտէն առուակ մը սահելով կ'երթայ, բայց ամթ գեղաջիններուն ծուռ ու մուռ փողոցներուն մէջ շինուած տուններուն հէփները վերի յարկէն կախուած են, բարձրէն միայն ծակ մը ունին, որոնց տակ վարը, գետին վրայ, վրան բաց փոս մը կայ և անոնց բոլորաթիբը հաւերը իրենց կեր վնստուելու կը թափառին։

Ասածնեկ են գիւղական տուները ամեն տեղ, ամեն տեղ առողջապահիկ կանոնները ոտնակոխ կ'ըլլան։ Ո՞վ գիտէ, մարդս աչքով աեսածին վրայ դատաստան կ'ընայ ընեւ և հոն ուր խաշինք ու մարդ մէկտեղ կ'ը բնակին, գոմն ու խորհիթը իրար կ'ը խառնուին, կարելի է ճարտարապետն ալ բժիշկն ալ գոհ ընել միանգամայն։

Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ աղտոտ կեղտոտ ըլլայ մեր քաղաքի բնակութիւնը, ինչո՞ւ ընտանի յարկը մաքուր երանութեան դրախտ մը չըլլայ: Գալով գիւղերուն՝ ինչո՞ւ պուխերիկին ծուխը հողագործին աչքը ճպռտտէ, ինչո՞ւ թոնիրին մէջ ուրբերնին կախած, մարդիկ ծոյլ ծոյլ նստին և ոչլտին: Պատասխանատու ենք մեր տուններուն համար, զորս բարւոքել կը պարտինք:

Զեմ խօսիր հոյակապ ապարանքի մը
վրայ, շքեղատեսիլ դղեակներ զիս չեն

Հրապուրեր, բայց, ա՛հ, կը ցանկամ
համեստ բնակութիւն մը, որ ինձի հան-
գիստս և պատիւ բերէ, ուր կ'ուզէ թող
ըլլայ, գիւղը թէ քաղաքը: փոխանակ
արտաքին զարդերով անոր ասոր աչքը
պարարելու, կոկիկ ու հանգստաւէտ
կարգադրութեամբ մեր և մերինները
երջանկադնենք:

Մարդ գիտնալու է որ տունը շինուած է, օդին յանկարծական փոփոխութեանց դէմ մեզ պաշտպանելու համար: Պէտք չէ որ դուրսի խոնաւը, չափազանց պայր, սաստիկ տաքը ներս թափանցեն:

Չեմ խօսիր հին տուներու վրայ, այն նասուկ, ընդարձակ տուներուն վրայ, որոնց բոլորաթիւը անպատճառ քիչ մը կանանչ կակաչ կը բումենէր, մէյմէկ կտոր պարտէջ կը բոլորուէր։ Հիմա նոր ճար-տարապետութիւնը, անոնց վրայ քա-մահրանքով կը նայի, որո՞ւ պիտի հաս-կըցնես թէ՛ սանտաքաներ, լեգէնտներ, իտալականներ, Էդվարդներ, Բեյքերներ, Դա-հլեններ, Կոբլեններ, Լաֆայետներ և պարս-կաններուն միայն յանցանքը՝ մեղի քիչ մը աւելորդ հանգիստ տալերնին էր։

Հիմա, գոնէ, նոր արհեստը նոր արհեստաւորին պատիւ բերելու է, որ հին ճարտարապետութեան մեղի պարգեւած դիւրութիւններուն համար ա՛յլ չքաշենք, թող Հանրապետի Պատուարժան ընթերցողներէն արհեստագէտ մը այս օրինակ շահեկան նիւթի մը վրայ գրել հաճի, ինչու որ մենք կը խոստովանինք թէ այս արհեստին մասնագէտը չենք և վստահ ըլլայ թէ ժողովուրդը անմիջական օգուտ մը քաղելուն համար, թէ գրողին երախտագէտ պիտի ըլլայ և թէ այն գրութիւնը ընդունող Հանրապետիկն:

Իսկ մինք ճարտարապետի մը այդ-
յօղուածին սպասելով՝ կը յանձնարա-
րենք որ տանիքին ծածքը և ջուրերուն
փողրակները խնամով պատրաստուին՝ որ
անձրեւին և ձիւնին խոնաւութիւնը ներս
չը թափանցէ, պատուհանները հաստ և

տուհուն փայտէ շինուին՝ որ տանը մէջ հով չը բանի, պատերուն ծեփը ընտիր չաղախէ պատրաստուի, որպէս զի միջատներ չը գոյանան, առաստաղը բարձր ըլլայ, որպէս զի օդը չ'ապականի, կոյուղիները խորունկ գտնուին, որպէս զի դուրս նեխահոտութիւն չ'արտաշնչեն:

Իրաւ մենք «Վ» չ'ունինք և անոնք ալ որ կը պարծին «Վ»-ի կեանք անցուցած ըլլալ, քիչ շատ ինքզինքնին խաբող քանի մը անափառներ են: Մեր մեծամասնութիւնը ի վաղուց անտի հիւրանոցներ ունի, որուն կուտայ իր բոլոր հոգը: Ինծի որ մնայ ամեն օրուան նըստելիք սենեակը, ինչպէս նաեւ խոհանոցը և ննջարանը աւելի խնամքի կարօտ են: պատահական հիւրը ուր որ ալ ըլլայ կրնայ նստիլ:

Տունը պէտք է բարձահայեաց, հովաւուն և արեւշատ ըլլայ: Տունը շուկային մօտ կամ հեռու ըլլայ նշանակութիւն չ'ունի:

Ոմանք իրենց տունը, իրենց գործատեղիին մօտ կը փնտռեն գիւղութեան համար: գլտորուիմ, շուկայէն տունս իջնամ կ'ըսեն: այս է Գում-Գարուցիին և Եէնի-Գարուցիին երազը:

Ձը վախճանք սիրելիք գիւղերը բնակելէ: Ի՞նչ կը հասկնաք Բերայի անարեւ փողոցներէն կամ Գում-Գարուի խոնաւ թաղերէն, աւելի աղէկ չէ՞ Գատրգիւղ կամ այլուր բնակիլ: Եթէ ձմեռը շոգեւորով երթեալեկելը աւելորդ յոգնութիւն մըն է, ամառը նոյն ճամփորդութիւնը ապահովաբար հաճոյալից և կ'ազդուրիչ է:

Իրաւ թերեւս ըսող գտնուի թէ՛ տուն մը ամառուան համար աղէկ իսկ ձմեռուան համար գէշ կրնայ ըլլալ և թէ տունը ամեն եղանակներու յարմարելու է: Ո՞վ ասոր հակառակ կը պնդէ, շոգեւորութիւնը ընկերութեան շահակից չենք ա՛:

Ինչո՞ւ ամեն տեսակէտով յարմարագոյն բնակութիւն մը չը նախընտրենք:

մանաւանդ որ շատ հիւանդութիւններու սկիզբը տան անյարմարութեան պէտք է վերադարձ: և աւելի աղէկ է անգամ մը ծախք ընել քան թէ հարիւր անգամ բժիշկը տուն խօթել:

Մանաւանդ հիմա որ տեղ շահելու համար ամեն միջոցի կը դիմէ ճարտարապետը, առջի ընդարձակ արսանները նախ չորսի հինգի բաժնուեցան յետոյ շէնքին բարձրութիւնը, օրէնքին ներածին չափ կրկնուեցաւ՝ այս ալ չը բաւեց, գետնին տակը խորունկը իջնալ սկսան ու շատ տուներու չէ թէ միայն խոհանոցը այլ նաեւ ամեն օրուան նստելու սենեակը փողոցէն ցած է:

Եւ որ ցաւալին է այս ալ բաւական չ'ըլլալով սիրուն բանի մը պէս ամեն տեղ «Բարեւ» կ'ըսեն կ'երթան, գոնէ բա՛ն մը ըլլայ: չըսեմ «Բարեւ» ժամանակ մը «Բարեւները պատուաւ որ մարդիկ կը բնակին եղեր, վերջը Խանէրու անկիւն գաւառացիք եկեր տուն տեղ եղեր են, ու վերջէ խան Ակնցի «Բարեւներու ժամանակ օր տեսեր է, ասոնց յաջորդեր է, թաղերու մէջ բնակութիւն, Լանկա, Պալատ, Սամաթիա, հետզհետէ անհատական կալուածներ բաղմացեր են: Իսկ չ'ունեւոր մարդիկ անոր ասոր տան մէջ վարձքով կը բնակին միշտ: Բայց վերջինորածեութիւնն է հարուստ, աղքատ «Բարեւ» մը նեղ սանդուխներէն շուրջը լով վեր ելլել:

Ո՞ր են հիմա մեր ծերուկ հայրերուն հինօրեայ օրհնեալ տունները, այն ընդարձակ պարտէզներով շրջապատուած սիրտ զուարճացող լոյս տունները, այն աստի ամեն մարդուն ապրանքը իր սեպհականութիւնն էր: Դարձեալ ով որ հանգիստ ընել կ'ուզէ, մանաւանդ Եւֆր թող քիչ մը ակռան սիւմէ, խնայողութիւն ընէ և իրեն անհատական բնակութիւն մը ունենայ, որ իր դուռը ինք բանայ ինք գոցէ ու իր տանը տէրը ինք ըլլայ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏՆԵՐ



Ա.

Առ Պրուզ

Դուք կ'ուզէք ակնարկ մը նետել հայ արհեստագործութեան վրայ, և վեր հանել մեր արհեստաւորներուն ձեռական աշխատութեանց մէջ ունեցած ճարպիկութիւնը, բռնական ձիրքերը և յարմարութիւնը: Այո՛, իրաւունք ունիք, անոնք որ մեր արհեստաւորները անձարակ կը կարծեն, կը սխալին. բայց ես պիտի ուզէի ըսել թէ, ձեռական բռնադուրսիկ աշխատութեանց դարը վաղուց անցած է, և երբ մենք կը քննանք մեր հնաւանդ դրութիւններու հեշտօրօք տատանումին մէջ, անդին գիտութիւնը և արհեստը ձեռք ձեռքի տուած, մետաղներու և մետաղակերպերու բիրտ և ահեղ ուժերու միջոցաւ մեծագործ յառաջ կը խաղան: Տեսած կամ լսած էք անչուշտ, Պրուզ կամ գաւառներու մէջ նշանաւոր արհեստագործներու անուններ, որոնք ժամանակ մը հանրութեան սքանչացումը և համարումը կը վայելէն, այսինչը գաղտնածածուկ կը պահէ մը շինելով, այնինչն ալ աղւոր անտուկ մը կամ գրասեղան մը, և կամ միւսը արուեստակերպ ծխատուփ մը հնարելով, այնինչ վարպետն ալ աշխատելու և պզտիկ շոգենաւ մը կամ շոգեշարժ մեքենայ մը շինելու է եղեր, վերջապէս ո՞ր մէկը ըսեմ. և առանց հակառակը պնդելու սակայն, պէտք է խոստովանիլ միեւնոյն անգամ որ, այդ հազուագիւտ վարպետներու ձեռակերտները բարձր գնահատութեան արժանի առարկաներ կրնան նկատուիլ, միայն թէ՛ խնդրոյն էական մասը ուր է գիտէ՞ք, նախ այդ ձեռակերտ առարկաները իրենց անհամեմատ սղութեան պատճառաւ հանրութեան անմերձեանի կ'ըլլան. երկրորդ՝ և դժբաղդաբար, երբ այդ հանձարեղ վարպետներէն պահանջուի որ՝ իրենց շինած հիմնալի առարկաներէն հազարներով պատրաստեն երկրին ներքին գործածութեան և կամ թրտածման համար, — չի մոռնանք բացառութիւնները —, ձեզ պիտի պատասխանեն թէ՛ սոց. իրենց գործը չէ՛, այլ եւրոպացոյց. և

այն ատեն պիտի հասկնաք որ, բոլոր իրենց խիւղացիութեամբ հանձարեղ կարծուած վարպետներու հմտութիւնը միայն այդ առարկաներու մէջ պարփակուած է. առարկաներ՝ որոնք քիչ անգամներ կրնան դրամ չահեցնել իրենց: Է՛հ, ի՞նչ ընեմ ես, այդ օրինակ վարպետութիւնը, որ աւելի «իւն» կը վաստկցնէ, քան թէ «ուն» ինչպէս կ'ըսէ առակը:

Եւ մենք ալ սակայն ի՞նչ երեսով, կամ ի՞նչ իրաւունքով այդ բարի մարդերուն դէմ գանգատինք, միթէ մեր վարժարաններու տուած դաստիարակութեան եղանակի հետեւանքը չէ՞ք նկատելու ստիկա ալ. դրականը ձգել և ստուերին ետեւէն վազել. ի՞նչ որ կը սորվին դպրոցական գրասեղաններու վրայ, նոյնին շարունակութիւնը կ'ուզեն փորձել դպրոցէն դուրս իրենց գործասեղաններու վրայ ալ:

Անոնք ամենն ալ պիտի կրնային արդարեւ մէյմէկ նշանաւոր և աշխարհածանօթ վարպետներ ըլլալ, եթէ դպրոցի գրասեղաններու վրայ, փոխանակ «սոխակ, վարդ, արշալոյս երագել» սովորելու, գործնական հաշուագիտութիւն, չափագիտութիւն, գոնէ բնական գիտութեանց նախնական ծանօթութիւններու հետ քիչ ո՞ր ալ մեքենագիտութիւն եւայլն սովորած ըլլային, այնպէս չէ՞. իրաւունք չունինք ըսելու թէ, մեր կրթական ծրագիրները կազմակերպուած են աւելի երազասէր և սնամիտ չըջանաւարտներ հասցնելով, դատարկապարտութիւնը և հատեւարար աղքատութիւնը ծաւալելու մեր մէջ. քան ողջամիտ անհատներ նուիրելու հանրութեան:

Անցեալ օր՝ բարեկամներէս մէկուն հետ տեսնուած ատենս, խօսակցութիւննիս անդալարար դարձաւ երկուքիս ալ ծանօթ դպրոցականի մը վրայ, որ կը պատրաստուի ընկերական կեանքի մէջ մտնելու, որ մինչեւ ցարդ ուշիմութեամբ հետեւած է իր դասերուն, սակայն իր սովորած ալմեպրայովը քիւօն օխայի վերածելու գործնական միջոց մը չի գիտեր տակաւին: Յաւալի բան չէ՞ այս. և սակայն որո՞ւնն է յանցանքը:

Ղ. ԲՈՒՆՏ

կուծիւն կ'ընծայէ հրապարակ նետել այդ գիւտն:

Հ. Այստեան, արդէն դիւրացուցած էր մասամբ հայերէն ուղղագրութիւնը. այսօր, այս փոքրիկ կանոններով, մասամբ մի ևս կը գիւրանայ ան, ու այլ ևս տարակոյս պէտք չէ ունենալ թէ ոչնչի, շինչ, — էրինչ, նարինչ. — արջ, փարջ, Բրջէլ բառերը չ'ով թէ զ ով, կամ՝ արջ-փարջ, փրջ, փարջ, Գրջ, — ան, փան, Բրջէլ բառերը ք ով թէ յ ով. կամ՝ Կարք, Կարք, Կարք. — Կեդանի, Կանդի, Կանդի եւայլն բառերը ք ով թէ ի ով, և կամ՝ Կանդի, Կանդի, Կանդի բառերը ք ով թէ ի ով պէտք է գրել:

Ասոնց ուղղագրական կանոնը գտնուած է Հիմայ. բայց զայն պարզիլէ առաջ պէտք է մեր ընթերցողներու մէկ մասին ծանօթացնել թէ՛ որո՞նք են նայ, Բա, Կարք և ինչպէ՛ կոչուած բաղաձայն գրերը:

Նախնի քերականները բաղաձայն գրերը երեք կարգի բաժնած են. ասոնց գլխաւորներն են,

1. Նուրբ կամ լերկ — ա. — Կ. — Կ. — Կ. — Կ.
2. Միջին » միջակ — Կ. — Կ. — Կ. — Կ.
3. Թաւ — Կ. — Կ. — Կ. — Կ.

Իսկ նայ կամ կէս ձայնաւոր կը կոչուին՝ շ (շ), շ, շ, (շ). Հիմայ նկատողութեան առնենք. կը տեսնենք թէ՛ նայ գրերէն անմիջապէս յետոյ միջակ բաղաձայն կը յաջորդէ և ո՛չ թաւ. Ասոր պէս ուրիշ կանոն մըն ալ կը գտնենք Քննական քերականութեան 343 էջին՝ 900 և 901 համարներուն մէջ, ուր Հ. Այստեան կ'ըսէ թէ՛ «Աւանձին մտադրութեան արժանի են կրկին կամ երեք աստիճան (լերկ կամ նուրբ, միջակ և թաւ) ունեցող բաղաձայններու բաղադրութիւնները, այսինքն, ընդհանուր կանոն է (գրելով ամէն լեզուաց մէջ) որ այդ աստիճաններն ունեցող բաղաձայններէն երբ երկուքը քովէ քով են՝ երկուքն

ալ նոյն կամ նման տեսակէն ըլլան. Չոր օրինակ » գրէն ետքը կամ լերկ և կամ թաւ գիր կուգայ, և ոչ միջին. Իսկ չէն ետքը միայն միջակ գիր. Ահաւասիկ կանոնաւոր բաղադրութիւնները,

ապ կամ աս, այլ ոչ աս
ապ » աս, » » աս
աս » աս, » » աս
նոյնպէս ի գրով աս » աս, » » աս

եւ կը յաւելու. Ի ասոր հակառակ չ գրով կանոնաւոր են՝ ալ, ալ, ալ, ալ, ոչ՝ ալ, ալ, ալ, և ոչ՝ ալ, ալ, ալ եւայլն:

Հ. Այստեան բաւական մտեցներ է մեր գտածին, իր սոյն օրինակ կանոնը ի մէջ բերելով և լրջօրէն զարմա՛նք, որ ուղղագրութենէն վրիպեր է այն:

Ուրեմն, մեր քիչ մը վերը ըսածին համեմատ. հայերէն արմատներու մէջ պիտի ունենանք՝

չ նայ գրոյն անմիջապէս քովը ճ. — գ. — դ. — բ. — ջ
» » » » ճ. — գ. — դ. — բ. — ջ
» » » » ճ. — գ. — դ. — բ. — ջ
եւ ոչ ց. — ք. — թ. — փ. — չ:

Թեեւ չէն անմիջապէս ետքը ք, ք, ք, և էն անմիջապէս յետոյ ք՝ և ք էն անմիջապէս ետքը ք և ք գալը չենք փորցած, բայց տրամաբանօրէն հաւանական է որ դան, քանի որ իրենց միւս միջակ ընկերներն խնամութիւն ունին նայերուն հետ:

Ասոնց և նայ գրոյն վրայ ուղղագրութիւն ըրած չենք թէեւ, բայց պիտի աշխատինք և անոնց դիմակն ալ վար պիտի առնենք. հետեւաբար այժմէն սրոյ բան մը չենք կրնար ըսել:

Ուրեմն, կը բարդենք մերինին վրան Հ. Այստեանի տա կանոնն ալ թէ՛ երբեմն նայ գրերու առջեւ միջակ բաղաձայնները ընտրութեամբ բաղաձայններու կը փոխուին և փոխադարձաբար, ինչպէս ինչ՝ ձոր — ինչոր, ինչի — ինչի, ընդէլ — ընդէլ,

անքի—անքի, անքառ—անքառ և այլն
և ռամիկն ալ այս փոփոխութիւնը կ'ընէ
առանց գիտնալու, օրինակ՝ քարակ ին
դարակ, ջուր ին հուր, յմեռին շմեռ, քոց
ին կոց, քուլ ին կուլ ըսելով, որոց նման-
ներէն քանի մը բառ ալ մնացած է գրա-
կան լեզուի մէջ ալ, ինչպէս՝ աքիկայ
փոխ. աքիկայ, աքոնք փոխ. աքոնք.
քովնքի փոխ. իքովնքի, խանձ փոխ.
խանձ, հունք փոխ. հունք, կունք փոխ.
գունք, ինչպէս կ'ըսէ՝ քննականի հեղի-
նակը:

ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

ՊԻՐՈՒ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ



ԿԵՂԾ ԲԱՐԵՊԱՇՏՆԵՐԸ

Սըւոր նայէ, սըւոր, տես կը ճանչնաս,
ո՛հ, ինչ ջերմեռանդ մարդ է կ'ըսես, ծուն-
կի եկած է Աստուածամօր պատկերին առ-
ջեւ, ձեռքերը կուրծքին կը զարնէ, անի
Հաւատով Սոստովանիմը ամբողջ կըսէ, Նա-
րեկէն՝ շատ մը գլուխներ գոց գիտէ և կ'ա-
ղօթէ, Տէր զի բազումին եկեղեցի կուգայ,
Օրհնեալ եղբուքին կը մեկնի, ի՛նչ հաւա-
տացեալ մարդ է, տեսնողը պիտի ըսէր ա-
ռանց վարանումի:

— Այո՛, սա արժանի է արքայութեան մէջ
Ս. Պետրոսի քովի կը նստելու:

Բայց ես քիչ մը չափազանց սկեպտիկ քը-
թիս առկէն կը խնդամ ու կ'ըսեմ:

— Դժոխքին ամենէն տաք տեղը...



Բայց ինչո՞ւ կը զարմանաք, ես զինքը կը
ճանչնամ նէ, իմ դիտած Յակոբոս աղաս
չէ, արհեստը Թէֆէֆի է:

— Ըստ իրեն սեղանաւոր:

Ասկէն օր երբ գոնէն դուրս կ'ելլէ խաչ
մը կը հանէ երեսը, ու Հայր մեր մը կ'ըսէ,
կը վազէ եկեղեցին, միմ մը կը վառէ ու յե-
տոյ գրասենեակը կ'երթայ:

Տակաւին բանալին փականքին մէջ չ'իւ-
թած, Հայր մեր մը կ'ըսէ, կը խաչակնքէ
փականքին վրան և կը բանայ դուռը ու ներս
կը մտնէ:

Մինչեւ հիմա ծայրայեղ կրօնասէր էր, ալ
կ'սկսի իր միտքը գործել, սատանայութիւն-
ներ կ'սկսի մտածել, ի՞նչ ընէ որ այն ինչ
մարդուն գործը խանգարէ:

— Ա՛յո, սա շունչանորդիին հախէն գայի
մէկ մը, ուրիշ բան չէի ուզեր:

— Կիրակոս աղան 10 ոսկի կ'ուզէ կոր,
չատ աղէկ ոսկիին ամիսը 3 դրոշ թող ֆա-
յիզ տայ. տունն ալ վրաս թող ընէ 6 ամ
սուան համար. օրին չի վճարեր, ես ալ կը
կըլլեմ, եա՛ ինչ աղւոր կըլլայ:



Այն միջոցին է Կիրակոս աղան կ'ուգայ,
և խեղճուկ դէմքով մը.

— Ինչ ըրիք, Յակոբոս էֆէնտի...

— Օ՛, Կիրակոս աղա հրամեցէք, եկուր
նայիմ. ծօ՛ խաչվէ մը բեր:

— Աման զահմէթ մ'ընէք:

— Ճանրմ նստէ, մէկ խահուէնիս ալ խը-
մէ, Գրիստոս ի՛նչ կ'ըսէ. «Ունեցածիդ կէսը
ընկերոջդ տուր չըսէ՛ր»:

— Ողջ ըլլաք Յակոբոս աղա, Աստուած
որտիդ կէօրէ տայ, (իւր սրտին կէօրէ
սա՛յ...):

— Ինչ ըսել է տէր ողորմես, պարտքեր-
նիս է նէ:

— Գիտես ա՛՛ Կիրակոս աղա, ես Աստուծ-
մէ կը վախնամ, և Աստուծոյ հրամանին դէմ
բան չեմ ըներ, ըսածներուս վրայ մտածե-
ցի՛ր, կ'ընդունին՝:

— Այո՛, այո, չօլուիս չօճուխովս մեզ աղ-
քատութենէ ազատեցիր:

— Ողջ ըլլաս, Աստուած մէկ օրդ հազար
ընէ:

Այդ միջոցին ներս կը մտնէ երիտասարդ
մը, և իրեն կ'առաջարկէ գումար մը նուր-
բել բարեգործական հաստատութեան մը:

Յակոբոս աղա, անմիջապէս տեղէն կը
ցատկէ կ'երթայ քաճային սաղնէ, և ոսկի
մը կ'ուտայ. և երբ երիտասարդը որ հա-
զար շնորհակալութիւններ յայտնելով կը
մեկնի, Կիրակոս աղան դառնալով.

— Կը տեսնես, Դաւիթ մարգարէին բա-

ծին պէս, «Տայ հայ քաղցելոց եւ Տէր ար-
ձակէ կապեալս» առածնիս կ'ուտանք ա-
սանկ:

— Աստուած ձեզի պէս բարերարները ազ-
գին մէջէն պակաս չ'ընէ:

* * *

Կիրակոս աղա դուրս կ'ելլէ, ու Յակոբ
աղան կը մոտձէ որ վերջապէս մուկը թա-
կարդը ինկաւ, բայց մեղք որ անոր հոն ե-
ղած ատենը իրեն զիմուեցաւ բարեգործա-
կան նպատակաւ դրամ ուզելու համար, չէ-
նէ կուտ մը չէր տար:

Կեղծ բարեպաշտին խօսած խօսքերուն
կէսը:

— Ես մեղաւորս պարբերութիւնն է:

Մէկ քառորդը:

— Աստուծոյ բան խապուլ չեմ ըներ, ես Աս-
տուածավախ մարդ եմ:

Մէկ մասն ալ:

— Ձէ, չեմ ուզեր որ խիղճս տանջէ, իմ
խիղճս հանգարտ է:

Ու ինք ամեն օր այս դրութիւնը կ'ընէ,
ամեն օր հարիւրաւորներու թշուառութեան
պատճառ կ'ըլլայ, և կիրակի օրը եկեղե-
ցին՝ Տէր զի բազումն մինչեւ Օրհնեալ ե-
ղերուք կը մնայ, ծունդի վրայ կ'յնայ կ'ա-
ղօթէ ու կ'աղօթէ, և ամեն մարդ իրեն հա-
մար կ'ըսեն:

— Անիկայ Աստուածավախ մարդ է:

Ես ալ կ'ըսեմ:

— Վասնիցէք այդ տեսակ մարդերէն:

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԹՈՌՆՈՐԴԻՆ

(Վեպիկ)

(Շար. 8-րդ 7 եւ վերջ)

Պապօ Սարգիս շատ զաւակներ ունեցած
էր, ամենքն ալ ամուսնացուցած էր և ամենքն
ալ ողջ էին բաց ի պինդ պզտիկէն, Գէոր-
գէն, որն որ շատ երիտասարդ մեռած էր,
և Օհաննէս անուն միամօր զաւակ մը թո-
ղուցած էր. խեղճ Օհաննէսն ալ իւր հօրը
բազդին կը վիճակի, և ամուսնանալէն մէկ

ու կէս տարի ետքը կը մեռնի մէկ հատիկ
մանչ զաւակ մը թողլով:

Եւ այս զաւակն էր թոռնոյ յգին Սարգիս.
ձեռքի վրայ մեծցած էր. մանաւանդ Պա-
պօյին ամենասիրելին էր, հոգին էր, երկու
աչքին լուսն էր. թոռնորդին մէն մի խնդ-
րա նքը պատգամներ, հրամաններ էին տանը
մէջ, օր մը օրանց յանդիմանութիւն մը ը-
րած և կշտամբած չէին զինքը:

Այս կերպ մեծցած զաւակ մը կրնաք ե-
րեւակայել թէ որչափ համարձակ և շփա-
ցած կ'ըլլայ. Մարիքայի սէր տալը պէտք
էր. անկէ զատուելուն պէս շիտակ Պապօ
յին եկած և պահանջած էր որ անմիջապէս
Մարիքան առնեն իրեն ճան, կարծես թէ
ծառէն խնձոր մը պիտի փրցնեն տան:

Պապօ Սարգիս շուարեցաւ այս բացար-
ձակ պահանջումին առջեւ. խրատեց, շատ
ըսաւ, քիչ ըսաւ, ինչ որ ալ ըրաւ չի կրցաւ
Սարգիսը համոզել որ ետ կենայ այդ մըտ-
քէն:

Հետեւեալ օրը Բանտէլի աղան իրեն կ'սն-
չեց և եղելութիւնը պատմեց. Բանտէլի բա-
ցէ իրաց մերժեց. և այս մերժումը թոռ-
նորդին հաղորդուեցաւ:

Սարգիս բռնկեցաւ և ինք անձամբ ելաւ
գնաց Բանտէլիին. ուզեց Մարիքան. միեւ-
նայն մերժումը. Սարգիս ոպառնացաւ ըսե-
լով. «Բանտէլի», քանի որ ատանկ կ'ըսես,
շատ աղէկ. ասկէց վերջը աղէկ պահէ չի
փախցնես Մարիքան... մինակ սա գիտցիր
որ քանի ես կամ աս աշխարհիս վրայ՝ Մա-
րիքային վրայ ուրիշը ձեռք չպիտի կրնայ
դպցնել... դուն գիտես ալ... գնա՛ գըլ-
խուդ ճարը նայէ»:

Սարգիս իրաւունք մըն էր որ կը պահան-
ջէր. քանի որ սրտին սիրածն էր, մէկզմէկ
սիրած էին, պէտք էր որ իրարու ըլլային.
Սարգիսը և Մարիքան իրարմէ զատել՝ մար-
մին մը մէջտեղէն երկուք ընել ըսել էր:

Բանտէլի աղա՝ Սարգիսի ըրած ոպառնա-
լիքը Զօրավարենց նուհապետին հաղորդած էր:
Ահա այն ատեն էր որ Պապօ Սարգիս ըն-
տանեկան ժողով գումարելով, թոռնորդին
խրատել և այդ մտադրութենէն ետ կեցնել
ուզած էր. սակայն չի յաջողեցաւ:

Սարգիս իսպառ հեռացած էր հայրենի
տունէն. իւր անբաժան ընկերը՝ կարմիր ձին

առած տներեւոթացած էր. Ձատկի օրերը տնգամ չի տեսնուեցաւ. տանը մէջ տիրութիւնը տիրած էր, ամենուն սիրելին չի կար. Պապօ Սարգիսի հարիւր տարիներուն վրայ կարծես հարիւր մըն ալ աւելցած էր:

* * *

Յունաց Սուրբ Գէորգի (Խրտէշէզ) օրն է. Յոյնի գիւղին մօտակայ մէկ բլուրին վերայ ժայռի մը գագաթը Սուրբ Գէորգի սրբապայրն է:

Այդ օրուան ուխտաւորներուն մեծամասնութեան ուխտն է կարմրցուած ուլերու, գառնուկներու հետ կարմիր գինիին համը նայիլ. Յոյն, Հայ, Տաճիկ խառն մօտակայ գիւղերէն խմուած են. կ'ուտեն կը խմեն առտո՞ւրնէ մինչեւ իրիկուն, խաղեր, պարեր, ըմբշամարտութիւններ տեղի կ'ունենան և ֆիթիտ կը խաղան:

Կէս օրը անցած է. գլուխներ տաքցած են կարմիր գինիի շոգիէն:

Այդ միջոցին կարմիր ձիաւոր մը սրընթաց կը հասնի. ամեն մարդ ապշութեամբ կը դիտէ զինքը, փոշիներու մէջ թաթխուած ձիաւոր մը:

Քանի մը հոգի անմիջապէս կը ճանչեն և կը բացագանչեն, «Թուռնորդի՛ն է»:

Խոր լուծիւն մըն է կը տիրէ. կարծես ելեքտրական հոսանքէ մը ցնցուած այնչափ բազմութեան խառնիճաղանձ խժըղութիւն մէկէն լուծեան դատապարտուած էր:

Սարգիս ձիուն վրայ անվնէր կեցած՝ աչքովը կարծես մէկը կը փնտռէ:

Վարկեան չ'անցնիր, շատ գեռաւոր գեղեցիկ պատանեակ մը կը մօտենայ իրեն, և անհասկնալի խօսք մը կը նետէ Սարգիսի — բարօլա մի:

Սարգիս կայծակի արագութեամբ ձիւն վար նետուելուն պէս՝ պատանեակը կը գրկէ և միասին ձիուն վրայ հեծցնելը ու ձին մըտրակելը մէկ կ'ընէ:

Ձին մտրակած ատենը Սարգիսի բերնէն սա բառերը լսուեցան, «Բանտելի աղային բարեւ արէք, Մարիքան թող աղէկ պահէ»:

Եւ ձին թեւեր առած էր. այնչափ բազմութեան մէջէն ոչ ոք հետապնդել մտքէն անցուց. մինչեւ որ անյայտացաւ ետեւէն նայեցան ապուշ ապուշ առանց հասկնալու

թէ Սարգիսի հետը տարած անձը ո՞վ էր. Սարգիսի ըսած խօսքերը բերնէ բերան Բանտելիին ականջը հասան. կայծակնահար եղաւ մարդը. փնտռութիւն ելան չորս դին, Մարիքա չի կար մէջտեղ:

* * *

Բանտելիի աղա շատ խիստ կը վարուէր աղջկանը հետ. մանաւանդ Սարգիսի սէր տուած ըլլալուն տեղեկանալէն ի վեր աւելի խստութիւններ ի գործ դրած էր, մինչեւ անգամ ծեծած էր խեղճ Մարիքան:

Սիրահարներ ամեն արգելքի կրնան յաղթել. անոնց համար անկարելի չի կայ:

Առանց զգացնելու Սարգիս և Մարիքա գաղտնարար յարաբերութեան մէջ էին իրարու հետ. ամեն օր մէկգլխիկ լուր կ'առնէին կուտային, թէեւ Բանտելիի աղան բնաւ երբէք աղջիկը տնէն դուրս չէր հաներ:

Բանտելիի աղա օրեր առաջ ուխտած էր Մարիքան Սուրբ Գէորգ տանիլ որ այդ սէվտայէն պազի:

Այդ օրը Մարիքա ծնողացը հետ Սուրբ Գէորգ գացած էր. ուխտ ըրաւ Ս. Գէորգի պատկերին առջեւ որ միայն... Սարգիսին ըլլայ, և աղօթեց որ ժամ առաջ գայ ազատէ զինքը... Սարգիս:

Բանտելիին գլուխն ալ շոգիով լեցուած էր. գինիին տուած զուարթութիւնը շատ անգամներ մարդուս մոռցնել կուտայ օրեր առաջ ըրած որոշումը. Մարիքան ազատ ձգած էր իր մօրը հետ:

Մարիքա իրեն հասակակից աղջկանց հետ սլահ մը խաղալ խնդալէն ետքը մէկէն աներեւութացած էր:

Միայն Սարգիսի եկած պահուն յերեւան ելաւ բոլորովին կերպարանափոխ եղած. մանչու զգեստ հագած էր:

Սարգիսի փախուցածը Մարիքան էր:

* * *

Սարգիս չունչը առաւ ծովեզերեայ քաղաք մը. Սարգիսի կնոջ անունը Մարիամ էր. մէկը չէր գիտեր որ Հայ Մարիամը՝ Հոռոմ Մարիքան էր:

Շատ տարիներ անցած է անկէ ի վեր, և ճշմարիտ սէրը շատ երջանիկ տարիներ պարգեւած է իրենց:

Այս առթիւ աւանդութիւն մը յիշեցնեմ. Զօրավարենց օճակին համար կ'ըսէին թէ՝ Ս. Սարգիսէ սերեալ է:

Եւ այդ աւանդութիւնը՝ մասամբ մը ճշմարտութեան մօտ ըլլալը ցոյց տալու համար՝ քանիցս այդ նահապետական տան անդամներէն միոյն Հոռմի աղջիկ փախցնել տուած էր. և ամենէն վերջինը եղած էր թոռնորդին:

ՔԱՐՈՂ

ՇԵՐԱՄԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՍԹԵՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ


(Դաս. օճաքի 7)

Հունտերու քիստմբ. — Ընդհանրապէս երբ թթենիներու ճիւղերուն պտկունքները (աչքերը) ուռելով կը ճաթին, պէտք է հունտերը հարաւի վրայ սենեակի մը մէջ իջեցնել, որոնք առաջուց չոր և զով տեղ մը կը գտնուէին. և երբ ճիւղերուն ծայրերը 10 փարանոցի խոշորութեամբ նորածիլ տերեւիկներ սկսին երեւիլ, աճապարելու է հունտերը թխաման (կօլօքա) ենթարկելու:

Այս գործին համար օգտակարապէս կը գործածեն մասնաւորապէս չինուած թխարաններ: Շատեր թէեւ հունտերը արթնցընելու համար իրենց վրայ կը կրեն, կամ տաքուկ անկողնոյ մը մէջ կը պահեն, և կամ ամաններու մէջ դնելով կրակի մօտ կը զետեղեն ցերեկը, և գիշերը կրկին իրենց անկողինը կը տանին, և կամ ասոնց մօտ չատ մը ուրիշ միջոցներու կը դիմեն, բայց ասոնք ամենն ալ գէշ դրութիւններ են. որովհետեւ երբէք կանոնաւոր և յարմարագոյն տաքութեան մը չի կրնալով ենթարկել՝ որդերը անկանոն կերպով կ'արթնան. և անոնք որ յարմար և օգտակար տաքութիւն մ'ստացած են, ամենէն առաջ հաւկիթէն դուրս կ'ելլեն, մինչդեռ միւսները նուազկոտ մնալով, իրենց զարթնումը կ'երկարի 10-12 և մինչեւ իսկ 15 օր: Շատեր անոնց մէջէն կ'ոչնչանան. և անոնք որ մնացած են, միշտ դանդաղօրէն կը յաւաքուի-

մեն, շերամաւորոյծին աշխատութիւնները կը դժուարանայ. որովհետեւ անոնցմէ մաս մը երբ իրենց տարեշրջանը կը լրացնեն, ուրիշ մաս մը տակաւին այդ տարեշրջանին նոր կը մտնայ. անդին ուրիշներ քնոյ մէջ են, ասդին տակաւին մէկ երկու օր կ'ուզէ որ քնանալու սկսին եւայլն, եւայլն. որով՝ շերամաւորոյծը կ'ստիպուի իր խնամները կըրկնապատկել, և այս բոլորովին պարապ տեղը. և թէ մշակութեան վերջը կը տեսնէք մանաւանդ, կարգ մը սկսած են իրենց խոզակները շինելու, ուրիշներ տակաւին իրենց ՅԴ խորխոցումին մէջ, անդին կարգ մը թիթեռնիկներ ալ աճապարած են իրենց պատեանէն դուրս նետուելու. և երբէք շերամաւորոյծը չի կրնար համիլ կանոնաւորապէս իր մշակութիւնը ընելու: Ահաւասիկ այս և ասոր նման շատ մը պատճառներու համար յատկապէս չինուած թխարանները յանձնարարելի են. որոնց միջոցաւ թխումը մը և զարթնումը միշտ կանոնաւոր կ'ըլլան ըստ կարելոյն:

Թխարանը պարզ գործի մ'է, որ ամեն մարդ կրնայ դիւրութեամբ պատրաստել:



Պատ. 14 — Շերամի քիստման

Երկու կողմէն բաց գլանաձեւ և երկայն տուփ մ'է, որուն տրամագիծը 40 և բարձրութիւնը 70 հ. մեթր է, և կազմուած է թէ կ'ուզէք իրարու վրայ դրուած մաղի շրջանակներով: Գլանին վերի կողմէն 50 հ. մեթր վար քանէվաջօ է կամ ուրիշ թուլ գործուած կտաւով մը կը բաժնեն երկուքի:

որ պիտի ծառայէ հոգևոր տուփերը վրան դնելու: Թխարանին բերանը կը գոցեն փայտէ կափարիչով մը: Կը պատրաստեն նաև ողորիէ (սօրզուն, տեսակ մը ուռի, պէօյիւտ, որ ընդհանրապէս ջուրի եզերքները և ճախնուտ տեղաւանք կը բուսնին) կողմփներ, որոնք յատակ չունին, և բերանը գոգեղու համար, նոյնպէս կափարիչ մը ողորիէ: և միւսին պէս երկու յարկի բաժնուած սղորիի ճիւղերով, որոնց վրայ տուփերը կը դրուին:

Այս վերջի թխարանը աւելի յարմար և գործածութիւնն ալ դիւրին է: օդը լաւ կրնայ շրջան ընել մէջը:

Այս թխարաններուն մէջ պէտք եղած տաքութիւնը յառաջ բերելու համար մէջը կը վառեն կանթեղ մը (իտարէ մը), և եթէ մէկ պատրոյգը (Ֆիթիլ) չի բաւէ, միեւնոյն ամանին մէջ կրնաք 2 պատրուգնկալ (շամանտուրա) դնել:

Թխարանը կը դնեն ընդհանրապէս պառկելու սենեկին մէջ, և կամ մասնաւորապէս պատրաստուած պզտիկ խցիկի մը մէջ, ուր կրնայ մարդ մը պառկիլ, գիշերներն ալ հսկելու համար: Կանթեղին վրայ բարձր կէկ եռուտանի մը կը դնեն, և անոր վրայ ալ պնակով մը ջուր: և կամ եթէ կ'ուզէք անագազած թիթեղէ (Թէնէքէ) աման մը շինել կուտաք 15 հ. մեթր տրամագիծով և 5 հ. մեթր կլերքով, որուն յատակը զօդուած կ'ըլլայ 3 ոտքեր երկաթէ թելերով և կամ նորէն կլորցած թիթեղով, այս ոտքերուն բարձրութիւնը վերի վերոյ 30 հար. մեթր կ'ըլլայ:

Թխարանին տաքութիւնը կը ճշգրտեն կափարիչով, որ երբ տաքութիւնը շատ ըլլայ, բոլորովին կը վերցնեն, և յետոյ կը տեղաւորեն կամաց կամաց: և այսպէս ի պահանջել հարկին գործածելու է զայն:

Տաքութեան աստիճանը հասկնալու համար կը գործածեն ջերմաչափ մը: Տեսած էք անչուշտ զայն, որ կազմուած է ապակեայ բարակ խողովակէ մը, վարի ծայրը ուռեցած գնտակի ձեւով, և մէջը լեցուած է ներկուած ալքոլ (իսքիրոօ) կամ սնդիկ (ճիվա):

Ջերմաչափը հիմնուած է բնագիտական սահմաններին վրայ թէ՛ «ամեն մարմին տաքու-

նեամ ազդեցութեամ տակ կ'ընդլայնի» (կր մեծ. նայ), իսկ պաղութեամ մէջ բճկնալիաւոր կր. կծկուի, կը պզտիկնայ: ահա այս օրէնքին հպատակելով, ջերմաչափին մէջի հեղուկն ալ տաքնալով վեր կ'ելլայ, իսկ պաղելով վար կ'իջնայ:

Ապակեայ խողովակը կը հաստատեն ընդհանրապէս տախտակներու վրայ, և հետեւեալ կերպով մասերու կը բաժնեն:

Ջերմաչափը կը խոթեն նախ դեռահալ սառոյցի մէջ. որով իր մէջի հեղուկը (ալքոլը կամ սնդիկը) կծկուելով վար կ'իջնայ. այն ատեն 0 աստիճան կ'ըսեն այն կէտին ուր հեղուկը կը մնայ և այլեւս վար չիջնար. յետոյ ջուր եռացնելով, այս անգամ գործիքը կը մխեն անոր մէջ. իսկոյն ջերմաչափին մէջի հեղուկը ընդլայնելով կը բարձրանայ. և 100 աստիճան կը նշանակեն այն կէտը, որուն վրայ կը կենայ հեղուկը: Յետոյ 0 և 100 ին մէջտեղը կը բաժնեն 100 հաւասար աստիճաններու: Այս եղանակով չիտուածին կը զուրցեն հարիւրադր ջերմաչափ, որ մեթրական դրութիւնը ֆունտայի մէջ հաստատուելէն յետոյ որոշեցին այս կերպ բաժնել ջերմաչափի աստիճանները: Բայց 1879 դարուն՝ Ռեօմիւռ անուն հռչակաւոր բնագէտ մը առաջին անգամ ըլլալով, տաքութեանց աստիճանները չափելու համար, հնարեց ջերմաչափ գործին, բայց անկափողանակ 100 ի բաժնելու, սառոյցին և եռացեալ ջուրին մէջտեղի միջոցը 80 ի բաժնած է, և իր անունով կը կոչուի Ռեօմիւռի ջերմաչափ:

Հրապարակի վրայ ծախուած ջերմաչափները թէեւ կատարեալ ճշգրտութիւն մը չունին, բայց շերամարութեան համար կարելի է գործածել(*): Դառնանք մեր խընդրոյն:

Երբ վերը ըսուածին պէս պատրաստ թրխարան մը ունենաք, հունտերը մէջը դնելէ առաջ, նախ տեղաւորելու է զայն. յետոյ կանթեղը վառելով, ջերմաչափը զետեղելու

(*) Հրապարակի այս ջերմաչափներուն վրայ թէ հարիւրադր և թէ Ռեօմիւռի աստիճանները միտն դամայն նշանակուած են խողովակին իւրաքանչիւր կողմը. (C) Ֆունտներէն գիրը հարիւրադր կը ցուցնէ. իսկ (R) գիրը Ռեօմիւռը:

ին և կապարիչը գոցելով սպասելու է, որ տաքնայ: Երբ ջերմաչափը 16 հարիւրարդ նշանակէ, որ Ռեօմիւռի 13 աստիճանին կը համապատասխանէ. այն ատեն հունտերը թխսելու ժամանակը եկած է ալ:

Փայտէ կամ խաւաքարտէ (մուքավա) փոքրիկ տուփերու մէջ հունտերը տարածեցէք չափ նուրբ խաւերով, այնպէս որ՝ իրարու վրայ չի խճողուին, և գոցեցէք զանոնք ճիշտ տուփերուն մեծութեամբ կտրուած շղարշներով (թիւ 1), որոնց ծակերէն նորածին թրթուրները անցնելով վեր կ'ելլան: Շղարշին ծակերը ըլլալու են վեր ի վերոյ 2 հ. մեթր տրամագծով, որ իրենց կակղութեան պատճառաւ ծակծկուած թուղթէ ծածկոցերէն աւելի յարմարագոյն են:

Ամեն օր պէտք է թխտարանին տաքութիւնը աստիճան մը բարձրացնել:

1 ⁰	օրը	16	Հ	կամ	13	Ռ.
2 ⁰	»	17	»		14	
3 ⁰	»	18	»		15	
4 ⁰	»	19	»		16	
5 ⁰	»	20	»		17	

Հինգերորդ օրը քսան հարիւրարդ տաքութեան մէջ որդերը ծնելու են, և մինչեւ որ ամենն ալ ծնին, թխտարանին տաքութիւնը միեւնոյնը ձգելու է (20⁰ հ.) որ կը տեւէ ընդհանրապէս 3 օրի չափ:

Եթէ երբէք հունտերը թխտարան դրուելէն վերջը օդային ու է է փոփոխումով թըթեններու բուսաւորութիւնը ետ մնայ: պէտք է այն ատեն թխտարանին տաքութիւնը միեւնոյնը բռնելով թրթուրներուն ծնին ալ յետաձգել մէկ քանի օր. բայց ուշադրութիւն ընելու է որ բռնուած տաքութեան աստիճանէն աւելի վար չիջնայ:

(Շարունակելի)

Ղ. ԲՈՒՏ

ԱՐՋԵՍՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Արուեստակոն գրառախսակ

Բնական գրատախտակները շատ անպատեհութիւններ ունին, որոնց առաջքը առնելու համար Եւրոպացիք խորհած են, և

բաւական երկար տարիներէ ի վեր հնարած են արուեստական գրատախտակը, որ կատարելապէս բնականին տեղը կը բռնէ, և անոր պէս ալ չի կոտրիր: Բաղադրութիւն մ'է այս, զոր կը քսեն պարզապէս հաստը թուղթի, խաւաքարտի վրայ, և եթէ ուզէք մինչև իսկ բարակ տախտակներու վրայ. և նոյն իսկ դպրոցական գրատախտակներու ներկին տեղ գործածել, որ անկէ աւելի դիմացկուն ըլլալով, գրութիւններն ալ լաւ կը կարդացուին: Ահաւասիկ բաղադրութիւնը.

Պարզ ջուր	1 լիթր
Ոսկերորակ (թէնէքեար)	100 կում
Ճերմակ լաքա (կօմալաք)	400 »
Բոմբախ քարի բարակ փոշի	250 »
Սեւագէղ (ֆումա, սեւ ներկ)	100 »

Ջուրը եռացուցէք, ոսկերորակը մէջը լեցուցէք, երբ այս վերջինը հալի, աւելցուցէք լաքաի խէժը (կօմալաք), չարունակ բաղադրութիւնը խառնելով. յետոյ դնելու է բոմբախ քարի փոշին, որ պէտք է բարակ մաղէ անցած ըլլալ: Երբ այս վերջինն ալ աղէկ մը խառնուի կրնաք աւելցնել սեւագէղը, և 5 վարկերի մը չափ եւս խառնելէ յետոյ կրակէն վար առնելով պարզուտէ անցնելու և ձգելու է որ պաղի:

Այս բաղադրութիւնը քսելու է վրձինով մը որոշեալ առարկաներուն վրայ մէկ երկու խաւ:

ԱՐՈՒՆԵՍԱԳԷՏԸ

ԱՐՏՆԻՆ ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆՔ

Գլխու ցաւի պարզ դեղ մը

Հետեւեալը կը յանձնարարէ ֆուստական թերթ մը:

Կէս գաւաթ պաղ ջուրի մէջ 1—2 կաթիլ քափրային ալքոլ (ալքոլ քանֆրէ, քեաֆիրի բուհու) խառնեցէք և խմեցէք: Ընդհանրապէս երբ գլխու ցաւը ստամոքսային անհանգստութենէ մը յառաջ եկած է, վերոյիշեալ դեղը կ'անցունէ:

Նոյնպէս քանի մը կաթիլ քափրային ալքոլ թ աչկինակի մը վրայ կաթեցնելով յա

ճախ հոտոտէք, ուրիշ շատ մը դեղերէ աւելի կը նպաստէ:

Քափրային ալքոլը հարկ չի կայ դեղագործներէ ծախու առնել, կրնաք դուք եւս պատրաստել հետեւեալ կերպով.

Քափուր (քեաֆիրի)	10 կում
Ալքոլ (իսպիրթօ)	90 »
Խառնեցէք իրար և պարզուա՛յն անցուցէք:	
Կամ կրնաք գործածել քափրային օղի.	
Քափուր	10 կում
Օղի (ուժով պէտք է ըլլալ)	390 »

Երբ քափրային ալքոլը գործածէք, պէտք է քիչ մը ջուր խառնել հետը, սաստկութիւնը թեթեւցնելու համար:

Սեմեակի մը օղբ մաքրել

Լիթրաի մը չափ եռացած ջուրի մէջ խառնեցէք 1—2 գգալ բեւեկնի խկութիւն (ծիրեմենծի բուսի): Եռացող ջուրի շոգին իր հետ մէկտեղ պիտի տարածէ սենեկին մէջ անտառային հեշտալի հոտ մը: Այս շատ պարզ եղանակը մանաւանդ օգտակար է կուրծքի հիւանդութիւն ունեցողներու, որ կրնաք օրը 2—3 անգամ կրկնել:

ԱՐԱՔՍ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Կարով սուրճը

Շատեր տարբեր կարծիքներ ունին կաթով սուրճին օգտակարութեան մասին: Ոմանք սնուցիչ կը գտնեն զայն, ոմանք ալ տկարացնող: Որո՞ւ հաւատալ...

Յրանաական թերթէ մը կը քաղենք հետեւեալը, որ կարծեմ թէ՛ շատեր պիտի հետաքրքրէ:

Կ'ըսեն թէ կաթով սուրճը ստամոքսին մէջ կը քացլտի և չի մարսուիր, ինչ որ շատերէ անհնթեթ նկատուած է. թէեւ իրաւ է որ կաթով սուրճը կը մակրդի ստամոքսին մէջ, ասոր արտաւորած բնական թթուներու ազդեցութեամբ, ինչպէս ստամոքսային նիւթը

որ իր մէջ կը պարունակէ քլօրային և կաթնային թթուներ, բայց պատճառը սուրճն է՞, լոկ կաթը արդեօք չի՞ մակարդուիր ստամոքսին մէջ. և սակայն կաթը խիստ լաւ կը մարսենք: Առանց սուրճի կաթ, կամ առանց կաթի սուրճը, կամ երկուքը միասին միեւնոյն արդիւնքը յառաջ կը բերեն. այսինքն կատարեալ մարսողութիւն և քատակում (կերուած սնունդը մարմնոյ վերածել): Սակայն կան ոմանք որ չեն կրնար մարսել կաթով սուրճը, այս պարագային ստամոքսը բնական անտրամադրելիութիւն մ'ունի, կամ սուրճին կամ կաթին նկատմամբ. ամեն ստամոքս իր քմահաճոյքը ունի: Կան այնպիսիներ որոնք ամենէն դժուարամարս սնունդները կ'առնեն, սակայն դիւրաւ կրնան մարսել. մինչդեռ դիւրամարսելի ճանցցուածները չեն կրնար մարսել: Ըսենք սակայն թէ ասոնք բացառութիւններ են:

Բնախօսական տեսակէտով, կաթով սուրճը ազահովապէս կը յանձնարարուի իւր դիւրամարս սնունդ: Ամեն ոք գիտէ թէ հիւանդաց կաթ կը տրուի, և որ դիւրութեամբ զայն կը մարսեն:

Գալով սուրճին, անդակաւ լաւ արժէք ունի: Բաղալուծումը փորձով կը ցուցնէ թէ՛ իւր մէջ կը պարունակէ աննդառութեան օգտակար աղեր, անուշահոտ գոյեղներ, որ նպաստաւոր կերպիւ կ'ազդէ մարսողութեան վրայ. ասոնցմէ զատ կը պարունակէ նաեւ բաւական քանակութեամբ պարարային նիւթեր, ջրածխային նիւթեր (այսինքն չնչառութիւնը տաժող նիւթեր): Վերջապէս, անկենդանային նիւթեր. որոնք, հանքային աղերու հետ մարմնոյն էական մասերը վերաշինելու նախասահմանուած են, այսինքն՝ միս, ոսկոր, մազ եւայլն:

Շատեր կ'ըսեն թէ՛ սուրճը մարսողութիւնը կը դժուարացնէ, բայց այս կարծիքը հիմնովին սխալ է:

Արդ՝ գիտական սկզբունքներու վրայ հիմնուելով, մենք ալ կրնանք ըսել թէ՛ այս երկու նիւթերու, այսինքն կաթին և սուրճին միացումէն անմարսողութիւն կամ դժուարամարսութիւն յառաջ չի գար: Մէկ կողմ գնելով այն բացասուիկ անձնաւորութիւնները, որոնց ստամոքսը հակակրութիւն մ'ունի կաթով սուրճին դէմ, մնացեալն.

բուն համար յանձնարարելի սնդարար ըմպելի մ'է:

ԱՐԱՔՍ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱՅԻՆԸ

Նորհալիս համեմատ

Սովորական համեմատացին պէս պատրաստեցէք խմորը (*), յետոյ 25 կուամ դարիճեկ (Թառչին), 25 կուամ գինձ (քիշնիշ), 5 կուամ մեխակ (քարանֆիլ), ասոնք սանդի (հավան) մէջ փոշիացնելով վրան աւելցուցէք. և նարնջի կեղեւով պատրաստուած անուշեղէն 125 կուամ և 125 կուամ լիմոնի կեղեւով պատրաստուած անուշեղէն մանրելով լաւ մը շաւղեցէք. հիմա թրեցէք ձեր խմորը ասոնցմով, այնպէս որ ամեն կողմ հաւասարապէս իրար խառնուին. Յետոյ սեղանի մը վրայ առնելով երկայն գլանի մը ձեւը տուէք. 4—5 հ, մեթր հաստութեամբ. և ձեր ճաշակին համեմատ ուզած ձեւերնիդ տալով, մի առ մի շարեցէք առաջուց ձէթով (զէթին եաղի) իւղառած ափսէի մը մէջ, և չի տարածուելու համար, չորս կողերնին փայտի կտորներով շրջապատեցէք. Վրձինը (Փորջա) կաթին մէջ թաթխելով ողորկեցէք (եփլա տալ) համեմատեցէք և կամաց փուռի (հացը եփել և հանելէն վերջ) մէջ եփեցէք. Երբ դուրս հանէք պէտք է որ լաւ եփած ըլլայ, յետոյ թանձրացած (խվամի եկած) և հաւկթի ձերմուցովը կտրած չաքարով փայլեցուցէք (կլասէ ընել). Սակայն, շաքարը ձերմակ և աղէկ թանձրացած ըլլալու է, որպէս զի կրկին փուռի մէջ գնելու չի հարկադրուիք:

★ ★ ★

Ֆլանդալական (Ֆլեմեկ) համեմատ

1 քիլո ալիւրը ամանի մը մէջ լեցնելով մէջտեղը խոռոչ (չուխուր) մը ձեւացուցէք, և 1 քիլո սպիտակ մեղր հալեցուցէք և ալիւրին մէջ լեցնելով շաղուեցէք, մինչեւ որ

(*) Տես քիւ 7:

աղէկ մը իրարու խառնուին. Յետոյ խմորը տարածեցէք 10 հ. մեթր հաստութեամբ, և ձգեցէք այսպէս մինչեւ առաւօտ: Առջի գիշերուընէ պատրաստեցէք նաեւ հետեւեալ ջեռաթուրմը (էնֆլուզիոն, այն ըմպելիները կամ դեղերը, որոնք ջուրը եռացուելէն վերջը մէջը կը ձգեն, կ'ըսուի ջեռաթուրմ). 35 կուամ կաթ, 12 կուամ ձերմակ կալի (քոթաս), 80 կուամ նարնջի կեղեւի անուշ, 80 կուամ լիմոնի կեղեւի անուշ, 5 կուամ մեխակ (քարէնֆիլ), 10 կուամ գինձ (քիշնիշ), 10 կուամ դարեճիկ (Թառչին) և 25 կուամ անխօս: Այս ջեռաթուրմով առաւօտուն լաւ մը թրեցէք խմորը, և յետոյ 225 կուամաց քառակուսիներու բաժնեցէք, և ափսէին մէջը առաջուց նուշի իւղով (պատէմ եաղի) օծելով հացերը մէջը շարեցէք. Հացերուն երեսը պէտք է վրձինով կաթ քսել և կամաց փուռի մէջ եփել. երբ երեսը կարմրի դուրս հանեցէք:

Այն ատեն ծեփեցէք երեսը հետեւեալ կերպով պատրաստուած ողորկիչով (եփլա), որուն քանակութիւնը, որովհետեւ միշտ տըրուած չափերուն, կրնաք յարմարցնել ձեր համեմատեցին քանակութեանը:

200 կուամ կարմիր գարեջուր (պիւռա), կէս օղիի գաւաթ կեռասօղի (քիւշ), հաւկթի մը ձերմակցին քառորդը, խառնեցէք և աղէկ մը դարկէք իրարու, որուն մէջ պէտք է հալեցնել 1 կուամ ձկան սոսինձ (պալլոգ թուծկալը). Եթէ ուզէք որ համեմատեցը աւելի բաց գոյն մ'ունենայ, փոխանակ գարեջուրի նոյն քանակութեամբ կաթ դրէք, և կողերը շարեցէք մէջտեղէն երկուքի բաժնուած նուշ, կամ անժելիքի (մէլէք չիլէյի) անուշ, լիմոնի կեղեւի կամ նարնջի կեղեւի անուշ ըստ ձեր հաճոյից:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԱՍԿԻ-ԱՆԿԻ

Գիշերներ բացուող ծաղիկներ

Արդէն ամեն մարդու ծանօթ է որ կան ծաղիկներ որոնք գիշերը կը բացուին, բայց մինչեւ այսօր նկատուած էր որ միայն խո-

տային բոյսերու մէջ կը գտնուէր այս երեւոյթը, վերջերս Պոմպէյի մօտ Կօա կղզւոյն մէջ ծառ մը գտնուեցաւ, որ արեւը մարը մտնելէն վերջը ծաղիկ կը բանայ և շատ սիրուն անուշահոտութիւն մը կը բուրէ, առաւօտուն ծաղիկները կը թոռմին և կը թափին:

★ ★

Կանթեղներու ապակիին գիւտը

Առկանտ անունով աղքատ գործաւոր մը ըրած է կանթեղներու ապակիին գիւտը: Երբ կ'աշխատէր առանց ապակիի կանթեղի մը առջեւ, իր պզտիկ տղան տակը կոտրած չիշէ մը հետ կը խաղար և որ այլ և այլ առարկաներու վրայ կը դնէր, պատահումով կանթեղին բոցին վրայ ալ դրաւ, Առկանտ տեսաւ որ կանթեղին լոյսը փոխուեցաւ և աւելի պայծառացաւ, այս դիպումածական փորձէն օգտուելով հնարեց կանթեղներու ապակին, որ ընդհանրապէս կը գործածենք կանթեղներու վրայ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Թիւ 15. — Ռօտոսթոցի մի քանի բարեկամներ մեզ կը հարցնեն թէ, ձմերուկը որդերէ աղատ պահելու միջոցը ո՞րն է:

Թիւ 16. — Գորտերը՝ որոնք կ'աւրչտկեն կանանչները ատոնցմէ աղատ ըլլալու միջոցը ո՞րն է:

ԻՋՄԻՏ. — Ա. Կտաւճեան էֆ. — Շնորհակալ ենք որ տեղւոյդ գործակալութիւնը ընդունեցիք, թերթերը կը ղրկենք:

ՌՕԹՈՏԹՈՅ. — Յ. Տ. — Ստացանք նամակնիդ, նոր բաժանորդներուն թերթերը ղըրկուեցան:

ԱՏԱԲԱԶԱՐ. — Ս. Ս. — Ձեր ուզած թերթերը ղրկեցինք, գրած նոր բաժանորդները արձանագրեցինք:

ՊԱՐՏԻՋԱԿ. — Վ. Ժ. — Նախկին ղրկեցինք և տակաւին պատասխան չ'ստացանք, կը զարմանանք ձեր լռութեան, ինչո՞ւ բաժանորդներու ցանկը չէք ղրկեր:

ԻՒՍԿԻՒՊ. — Մ. Ա. Ս. Ն. — Թերթերը

կանոնաւորապէս կը ղրկուին. ձեր պատասխանին կ'սպասենք:

★

★

Կը խնդրենք մեր գաւառական յարգոյ Գործակալներէն որ բարեհաճին մեզ խնայել ժամ առաջ բաժանորդաց ցանկը, որուն համեմատ թերթ ղրկենք իրենց, և որովհետեւ մեր բաժնեգինը կանխիկ է ղըրկենք իրենց ընկալագրերը:



ՄԵՐ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԷԻՅ

1. ԱՐՄԱՆԱՆԱՆ ՆԻ Ս. ԵՄԻՐՁԷ

4. Պոլիս Ֆեֆլեան խանի քակ թիւ 3

Վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական գործիքները, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով, Լ. Ասլանեան և Ս. Էմիրզէ Լճկերութիւնը երկարատեան անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառացի համար, որոնց կը ղրկենք գեղորայք ամենայն արագութեամբ, թարմ և մաշկի գներով:

Չարաճճի միւլկներու և լուերու եւլն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած ենք ուղղակի Տալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւրեմք յարգոյ հասարակութեան:

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



LESSIVE MAGIQUE

ԼԷՍԻՎ ՄԱԺԻԲ

ԱՌԱՆՅ ԿՐԱԿԻ ՆԻ ԱՌԱՆՅ ԱՃԱՌԻ ՃԵՐ / ՍԿԵՂԻՆԱՅ ԼՈՒԱՅՈՒՄ

ԴԻՐՈՐԻՒՆ — ՄԱՐՈՐԻՒՆ — ԽՆԱՅՈՂՈՐԻՒՆ



ԼԷՍԻՎ ՎԷՆՈՒՍ

Դադարից կառավարութեան հոռոտութեամբ արձանագրեալ արժապետի միտալ
հետեւ արժանացած

Սոյն հրաշալի նոր գիւտով, ազատեցէք այլ եւս յոգնութիւններէ, ա-
ւելորդ ծախքերէ ու ժամանակի կորուստներէ և մանաւանդ ճերմակեղէն-
ները մոշեցնող և ձեռքերու ալ վնասող անպատեհութիւններէ:
Ճերմակեղէններ, բրդեղէններ, սեղանի ու խոհանոցի անօթներ եւայլն
լուալու ու մաքրելու համար, ամենէն ընտիր միջոցն է այս գիւտը, որ մեծ
առաւելութիւն մ'ալ ունի հականերիչ բլլալով:

Փորձեցէք, բազմապատեցէք, միշտ պիտի գործածէք:

Լէսիվ անունով մինչեւ հիմա տեսնուած ապրանքներէն զանազանելու
համար պէտք է պահանջել բաքէթներու վրայ վերեւ գրուած ՄՍԺԻԲԻ և
ՎԷՆՈՒՍ մարքաները, խորդախութիւն ընողը օրէնքով կը պատժուի:

Կը ծախուի մէկ դնով Պոլսոյ բոլոր արուարձաններու մէջ:

Կեդրոնատեղիներն են՝ Ղալաթեա Մոմհանէ Բիֆաթ խան, Թիւ 19, 20
և Պոլիս Փընտըղլեան խան, Թիւ 3, Լ. Արսլանեան և Ս. Էմիրլէ վաճառ-
ատներն:

Դաւառաց համար գործակալութիւն կը տրուի, փափաքողները պէտք
է դիմեն ընդհանուր Թուրքիոյ, Եգիպտոսի, Պուլխարիոյ, Ռումանիոյ և Սեր-
պիոյ գործակալին, հետեւեալ հասցէով:

Պ. Սէֆերեան, Մոմհանէ, Բիֆաթ խան, Թիւ 19, 20 և Պոլիս, Ղալաթիա

Հանրապետիկ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս:
 Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական եւ այլն, եւ այլն. շահեկան նիւթեր:
 Երկրագործական, Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը արուին մասնագէտներու ձեռքով:
 Բաժանորդագրութիւնք եւ թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրապետիկ լրագրի

և. Պոլիս, Զարգարեան Գրասուն, Զագմահրար-Սօզաւուր թիւ 50

در علیّه ده چقاچیلده ۵۰ مومروى زارطاریان کتبخانه سنده (حاضر اقبداق) مجموعه علوم غزنسى اداره سنده

Հանրապետիկ՝ պատրաստ է ընդունել ամեն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ դիւրամտութիւն պայմաններով: Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրէնակ, զոր պիտի ազդարարենք հանարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը:

ԳՐԹԱԿԱՆՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պողարեան	ԿԻՐԱՍՈՐ. — Արմենակ էֆ. Սօմունճեան.
ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Սաիրիչեան	ԿԵՍԱՐԻԱ. —
ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուկէան.	ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
ԱԹԵՆԲ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.	Վարժապետեան.
ԳՈՒՐՏ-ՊԵԼԵՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան.	ՄԱՆՁԵՍԹՐ. — Յակոբ էֆ. Բոլատեան.
ԳԱՀԻՐԵ. — Մ. Պաղտատար էֆ. Ս. Նաթանեան.	ՄԱՐԶՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ԷՐԶՈՒՄ. — Եղ. էֆ. Տ. Ազարեան.	ՄԱՐՍԻԼԵԱ. — Նազարէթ էֆ. Զարգարեան.
ԹԵՀՐԱՆ. — Կորապէտ էֆ. Բարարեան.	ՄՈՒՇ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ԻԶՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալէճանեան.	ՊԱՆՏԵՐՄԱ. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան.
ԻԶՄԻՏ. — Արրահամ էֆ. Կտաւճեան.	ՊԱՐՏԻԶԱԿ. — Վահան էֆ. Ճլիունի.
ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.	ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լուիֆեան.
ԽԱՐԱԲԵՐԴ. — Խոսրով էֆ. Քէչիչեան.	ՌՈՏՈՍԹՕ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ԿԵԼԻՊՈԼՈՒ. — Յովսէֆ էֆ. Տէր-Յովսէֆիեան.	ՍԱՄՍՈՐ. — Կարապետ էֆ. Սէֆէրեան.
	ՍԸՎԱԶ. — Յ. էֆ. Գարակէօղեան.
	ՏՐԱՊԶՈՐ. — Սահակ էֆ. Էթմէքճեան.

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Գիրք գնելի կ'ուզե՞մ, դիմեցե՞մ Զարգարեան Գրասունը. հոն միշտ պիտի գտնե՞մ ամեն ուզածնիդ եւ սիշտ գեղյով:

Հանրապետիկ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Լանկա, Խաչիկ էֆ. Ֆէսճեան Դեղարանը:
 Սամաթիա, Կայարանը Թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը:
 Մազրի-Գիւղ, Պողոս էֆ. Ազնաւորեանի խանութը:
 Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանը:
 Սկիւտար, Փիշթօֆճեան էֆ. խանութը:
 Բերա, Մեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: